

ԺՈՐԵՍ Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Պալատական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
khachzhores@mail.ru

ԱՐՄԵՆ Ֆ. ՆԱԽՇԲԱՐՅԱՆ

Պալատական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
armenarxeolog777@rambler.ru

ԱՔԵՄԵՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՀՅՈՒՄԻՍԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ՇՈՒՐՁ

(պալատահնագիտական քննություն)

Սկսած անցյալ դարի 40-ական թվականներից պատմագրության մեջ Իրանի հյուսիսարևմտյան և արևելյան Այսրկովկասի շրջանները նույնացվում են ոչ միայն տարածքային, այլև պատմական, քաղաքական ու էթնիկ առումներով¹:

Աքեմենյան Պարսկաստանի XI և XIV սատրապությունների տարածքների մի մասը տեղորոշվում են Արևելյան Այսրկովկասում²: XI սատրապության մեջ հիշատակվող կասպերը կապվում են կատիշների³, իսկ XIV սատրապության ուտիները և մյուկերը՝ Կուրի աջափնյակի և Արաքսի հարավային շրջանների հետ⁴: Ի. Ալիևը, ելնելով հույն պատմիչ Արիանոսի՝ Գավգամելայի ճակատամարտի մասին հաղորդումից⁵, կարծիք է հայտնում, որ Աքեմենյան տերության վերջին շրջանում, օգտվելով կայսրության թուլացումից, X սատրապության /Մարաստանի/ սատրապ Ատրոպատեսը /հետագա Ատրպատականի թագավորության հիմնադիրը/, իր ձեռքում էր կենտրոնացրել ոչ միայն X, այլև XI և XIV սատրապությունների իշխանությունը⁶: Ընդ որում, Գավգամելայի ճակատամարտում հիշատակվող աղվանները, սակեփներն ու կատիշները համարվում են ոչ թե Աքե-

1 Шнирельман В. А., 2003, 133–135.

2 Алиев И. Г., 1961, 104; 1989, 51–53.

3 Алиев И. Г., 1989, 51–53.

4 Նույն տեղում:

5 Арриан, 1962, III, 8, 4.

6 Алиев И. Г., 1989, 51–53.

մենյաների, այլև Ատրոպատեսի դաշնակիցներ: Այս իրողությունները վերջինիս կողմից օրինաչափ են համարվում, որոնց ակունքները բերվում են թերևս մարական ժամանակաշրջանից⁷: Ելնելով Պոլիբիոսի կողմից բերվող Ք.ա. 3-րդ դարի վերջին քառորդին վերաբերող տեղեկություններից⁸ Ի. Ալիևը գտնում է, որ Ատրոպատեսի և նրա հաջորդների իշխանությունը տարածվել է ոչ միայն Կուր և Արաքս գետերի միջագետքում, այլև Արևմտյան Այսրկովկասում:⁹ Որպես ատրպատականյան ներկայության լրացուցիչ ապացույցներ են բերվում Կուրի աջափնյակի ներկայիս Կարա-Թեփե, Թազաքենդ և Կալա-Թեփե կոչված վայրերում պեղված հուշարձանների հնագիտական նյութերը:¹⁰ Պատմական Ուտիքի տարածքում գտնվող վաղ հայկական և հելլենիստական ժամանակաշրջանով թվագրվող այս հուշարձանները, սակայն, հին հայկական մշակույթի բաղկացուցիչ մասն են և որևէ առնչություն չունեն Ատրպատականի տարածքում հայտնաբերված համաժամանակյա հուշարձանների հետ:

XI սատրապության վերաբերյալ Հերոդոտոսը գրում է. «Կասպերը, պավսիկները, պանտիմաթները և դարեյտները մեկ նահանգ կազմած վճարում էին երկու հարյուր տաղանդ: Սա էլ XI նահանգն էր»¹¹: Դեռևս անցյալ դարի ութսունական թվականներին Ա. Հակոբյանը կասպերին և Կասպիանե երկրին նվիրված հոդվածում սկզբնաղբյուրների մանրակրկիտ մեկնության և քննության արդյունքում պարզել է, որ «կասպեր» տերմինն առաջացել է Կասպից ծովի անունից և տրվել է ծովափնյա բնակչությանը, ինչպես «պոնտացիներ» տերմինը՝ Սև ծովի ափի բնակչությանը: Անտիկ հեղինակներից ոչ մեկը չի լսել կասպ անունով էթնիկապես ուրույն ժողովրդի: Վերը բերված կասպերը չեն նույնանում Ստրաբոնի կողմից հիշատակվող Փայտակարան աշխարհի կամ Կասպքի կասպերին: Կասպիանա տերմինը նշանակում է Կասպից ծովի ափին ընկած շրջան: Այդ անունով աղբյուրներում վկայված են երեք տարբեր մարզեր:¹²

Հերոդոտոսը հիշատակում է կասպերի մեկ այլ խմբի, բայց այս անգամ՝ XV սատրապությունում: Պատմահայրը գրում է. «Սակերը և կասպերը վճարում էին երկու հարյուր հիսուն տաղանդ. սա տասնհինգերորդ նահանգն էր»¹³: Ելնելով Հերոդոտոսի այս հաղորդումից, ուսումնասիրողների մի մասը, չնկատելով կասպերի վերաբերյալ վերը բերված այս բացահայտումները և հիմք ընդունելով կասպերի ու սակերի հարևանության փաստը, սկզբնաղբյուրների մակերեսային քննության արդյունքում XV սատրապությունը ևս տեղորոշում է Այսրկովկասում:¹⁴ Ընդունելով Ա. Հակոբյանի տեսակետը՝ մենք ևս հակված ենք այն մտքին, որ XI և XV սատրապությունները գտնվել

7 Նույն տեղում:

8 Նույն տեղում, 53:

9 Նույն տեղում, 52–53:

10 Алиев И. Г., 1989, 106. Эминли Дж., 2010, 302.

11 Հերոդոտոս, 1986, III, 197:

12 Հակոբյան Ա. Ա., 1983, 99:

13 Հերոդոտոս, 1986, III, 197.

14 Тер-Мартirosов Ф. И., 1998, 140–141: Меликов Р., 2003, 103.

են Կասպից ծովի հարավային և հարավարևելյան ափերին:¹⁵

Ինչ վերաբերում է XIV սատրապության կազմում հիշատակվող ուտի-ներին ու մյուկներին, ապա վերջիններս կապ չունեն ոչ այսրկովկասյան ուղիների և ոչ էլ Մուղանի տարածքի հետ:¹⁶ XIV սատրապությունը գտնվել է Իրանի հարավային շրջաններում:¹⁷

Վերը թվարկված սատրապությունների՝ Այսրկովկասում տեղադրման տարարնույթ մոտեցումները հերքվում են Բ. Հարությունյանի «Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ» արժեքավոր աշխատանքում: Հեղինակի կարծիքով XVIII սատրապության սահմանը հյուսիսում անցնում էր Կովկասյան մեծ լեռնաշղթայով՝ թերևս հասնելով մինչև ներկայիս Դերբենդ քաղաքի հյուսիսային մատույցները, արևելքում՝ Կասպից ծովով մինչև Կուրի գետաբերանը, հարավում՝ Կուր գետով և Թռեղքի լեռնաշղթայի ջրբաժանով, սահմանակցելով XIII սատրապության մեջ գտնվող Հայաստանին, և արևմուտքում՝ Սուրամի լեռներով մինչև Կովկասյան մեծ լեռնաշղթան՝ սահմանակցելով XIX սատրապությանը:¹⁸

Աքեմենյան տերության XI, XIV, XV և XVIII սատրապությունների տեղորոշման վարկածների և տարածաշրջանի առայժմ գոյություն ունեցող հնագիտական պատկերի միջև կան որոշակի անհամապատասխանություններ: Խնդիրն այն է, որ Կովկասյան լեռնաշղթայի հարավային փեշերից մինչև Կասպից ծովի արևմտյան ափ, Կուրի ձախափնյակից մինչև Ալազան գետի արևելյան հատվածն ընկած տարածքներում առայժմ աքեմենյան տիպի որևէ հուշարձան չի հայտնաբերվել:¹⁹ Չի բացառվում, որ տարածաշրջանի համակարգված և ծրագրային հնագիտական հետազոտությունները նոր լույս կարող են սփռել այս խնդրի վրա: Սակայն հանելուկային է մնում այն իրողությունը, որ վերոհիշյալ տարածքներում գրեթե մեկդարյա հնագիտական ուսումնասիրությունները որևէ արդյունք չեն արձանագրել այս հարցում: Այսրկովկասում հայտնաբերված աքեմենյան տիպի հուշարձանների տեղագրական և գործառնության առանձնահատկությունների ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս եզրակացնելու, որ, ըստ երևույթին, այս տարածքներում նմանատիպ հուշարձաններ չեն եղել: Կուր և Ալազան գետերի աջափնյակներում սփռված հնագիտական հուշարձանների քննությունը ցուցում է, որ վերջիններս /ներկայիս Սարի-թեփե²⁰, Կարաշամիրլի²¹, Գումբաթի²²/ պաշտպանական գործառնություններ են ունեցել՝ պարսպապատերով շրջափակված շինություններ, կայազորի համար նախատեսված կառույցներ: Այսրկովկասում հայտնաբերված այս հուշարձաններից երկուսը՝ Սարի-թեփե և Կարաշամիրլի /ներկայիս Ղազախի և Շամքորի շրջաններ/ գտնվում են Կուրի աջափնյակում, իսկ Գումբաթին՝ Ալազանի աջափնյակում /Արևելյան

15 Հակոբյան Ա. Ա., 1983, 94:

16 Акопян А. А., 1987, 75.

17 Дандамаев М. А., Луконин В. Г., 1980, 195.

18 Յարութիւնեան Բ., 1999, 100–101:

19 Кудрявцев А. А., 1982, 27–43, Археология СССР, 1985, 43–47, F. Knauss, 2006, 79–118.

20 Нариманов И. Г., 1960, N 4, 162–164.

21 Florian S. Knauss, 2007, 1–51

22 Florian S. Knauss, 2000, 119–130.

Կախեր՝ Վերջինս մինչ այժմ հայտնաբերված աքեմենյան տիպի ամենահյուսիսային հնավայրն է։ Անբացատրելի է մնում այն հարցը, թե ինչու՞ Աքեմենյան սատրապությունների միջև ընկած այս ենթադրյալ սահմանը պետք է պաշտպանվեր նման աննախադեպ միջոցառումներով։ Կամ Ալազանի հովիտը XVIII սատրապության գրեթե կենտրոնում տեղորոշելու պարագայում այս բնակավայրը պաշտպանական ինչ գործառույթ պետք է իրականացներ։ Նյութի քննության սկզբում ենթադրում էինք, որ գործ ունենք սահմանային ամրությունների երկու ժամանակագրական շերտերի հետ, ըստ որի՝ սկզբնական շրջանում Աքեմենյան տերության հյուսիսային սահմանը այս հատվածում եղել է Կուր գետը, իսկ XVIII սատրապության հիմնադրման ընթացքում տեղափոխվել Կուրից հյուսիս ընկած շրջաններ։ Սակայն այս ենթադրությունը մասամբ է համապատասխանում իրականությանը /Իորիի և Ալազանի ավազաններ/։ Երկրորդ վարկածի համաձայն՝ ենթադրվում էր, որ գործ ունենք պաշտպանական մի հզոր ցանցի հետ, որն իր շարունակությունը պետք է ունենար Կուրի ձախափնյակում՝ հյուսիսում վերջնակետ ունենալով Դարյալի, իսկ արևելքում՝ Դերբենդի լեռնանցքները։ Սակայն Կուրի և Ալազանի աջափնյակներում տեղակայված պաշտպանական համակարգի առկայությունը և Կուրի ձախափնյակում²³ ու Դերբենդում²⁴ աքեմենյան տիպի նմանատիպ համակարգերի բացակայությունը բացառում է այս ենթադրության հավանականությունը։ Եգիպտոսի նկարագրությանը վերաբերող հատվածներից մեկում Հերոդոտոսը նշում է. «Պսամմետիքոս թագավորի օրոք կայազորներ հաստատվեցին եթովպացիների դեմ Ելեփանտինե քաղաքում, արաբների և ասորեստանցիների դեմ՝ Դափնեում, որը Պելուսիայում է, և Լիբիայի դեմ՝ Մարեայում։ Դեռ իմ ժամանակ ևս այս նույն վայրերում կանգնած են պարսկական կայազորներ, ինչպես եղել էին Պսամմետիքոսի օրոք, քանզի պարսկական կայազորներ կան Ելեփանտինեում և Դափնեում»²⁵։ Հաղորդման վերջում Աքեմենյանների կայազորների վայրերը հիշատակելիս, պատմահայրը բաց է թողնում Մարեան, որն, ըստ երևույթին, Լիբիայի մի մասը VI սատրապության մեջ ընդգրկելու պատճառով կորցրել էր իր ռազմավարական նշանակությունը։ VI սատրապության սահմանային ամրությունների համեմատությունը Կուր և Ալազան գետերի աջափնյակում տեղակայված պաշտպանական համակարգերի հետ մեզ թույլ է տալիս եզրակացնելու, որ վերոհիշյալ հուշարձանները ժամանակին Աքեմենյան տերության հյուսիսային սահմանի պաշտպանական համակարգի բաղադրատարրերից են եղել, իսկ այդ պաշտպանական համակարգի կարևորագույն և առանցքային բաղադրատարրերը՝ որպես բնագծեր, եղել են Կուր և Ալազանի գետերը։ Կուրի աջափնյակում տեղակայված հուշարձանների տեղագրական և գործառութային առանձնահատկությունների քննության սկզբում ենթադրվում էր, որ նմանատիպ հուշարձանները պետք է իրենց շարունակությունը ունենային նաև Կարաշամիրլիից հարավ ընկած տարածքներում՝ վերջնակետ ունենալով Կուրի և Արաքսի միախառնման

23 Florian S. Knauss, 2006, 79–118.

24 Кудрявцев А. А., 1982, 27–43.

25 Հերոդոտոս, 1986, II, 90:

հատվածը: Սակայն վերը նշված հուշարձանների տեղագրական առանձնահատկությունների համեմատությունը Կլավդիոս Պտղոմեոսի՝ տարածաշրջանին վերաբերող քարտեզի հետ, ըստ երևույթին, բացառում է վերջին ենթադրությունը²⁶: Ըստ Ս. Մուրավյովի, Պտղոմեոսի քարտեզի հիմքում ընկած է Ք.ա. III-րդ դարի ինչ-որ հեղինակի քարտեզ: Այս քարտեզի ուսումնասիրությունից ելնելով՝ հեղինակը կարծիք է հայտնել, որ Ք.ա. VI-րդ – Ք.հ. III-րդ դդ. տեղի է ունեցել Կասպից ծովի մակարդակի բարձրացում: Վերջինս ենթադրում է, որ Կուր գետը Կասպից ծով է թափվել ներկայիս Մինգչաուրի և Եվլախի շրջաններում:²⁷ Դատելով վերոհիշյալ պաշտպանական համակարգերի տեղաբաշխվածության օրինաչափություններից՝ շատ հնարավոր է, որ ապագայում նմանատիպ պաշտպանական համակարգ հայտնաբերվի Կարաշամիրլիի և Եվլախի միջև ընկած շրջաններում:

Ելնելով վերը բերված հնագիտական փաստերից՝ հարց է ծագում՝ արդյո՞ք Կուրից հյուսիս ընկած տարածքները մտել են Աքեմենյան տերության որևէ սատրապության մեջ: Ավելացնենք, որ սեփական քննության ընթացքում նմանատիպ հարցադրում արվել է նաև Բ. Հարությունյանի կողմից:²⁸ Մեր կարծիքով՝ այս հարցերի պատասխանն առկա է նաև Հերոդոտոսի Կովկասյան Մեծ լեռնաշղթայի արևմտյան և հավանաբար կենտրոնական հատվածներին վերաբերող ուշագրավ տեղեկության մեջ. «Նույնիսկ կոլխերը և նրանց հարևանները՝ մինչև Կովկաս լեռը, քանզի մինչ այդ լեռը տիրում են պարսիկները, իսկ Կովկասից հյուսիս /ընկած երկիրը/ հաշվի չի առնում պարսիկներին, նույնպես հարկ տալիս են ընծաներ մատուցելու ձևով»:²⁹

Կասպից ծովի արևմտյան հատվածը նկարագրելիս Հերոդոտոսը նշում է հետևյալը. «Այս ծովի արևմտյան մասով ձգվում է Կովկասը /այս դեպքում Կովկասյան լեռնաշղթայի արևելյան հատվածը՝ – Ժ. Խ., Ա. Ն./, որը բազում խոշոր և բարձրագույն լեռներ ունի: Կովկասում բնակվում են բազմաթիվ և բազմապիսի ազգեր, որոնց մեծ մասը ապրում է վայրի /անտառների/ պտուղներով: Պատմում են, որ այստեղ կան այնպիսի ծառեր, որոնց տերևները մանրացնելով խառնում են ջրին և դրանով իրենց զգեստների վրա նկարներ գծում: Այդ նկարները չեն լվացվում, այլ մաշվում են բրդե գործվածքի հետ, ասես դրանք սկզբից եղե՞ գործված լինեն միասին: Այս մարդիկ իրար հետ բացահայտ խառնվում են, ինչպես անասունները»:³⁰

Ուշագրավն այն է, որ պատմահայրը չի խոսում Աքեմենյանների

26 Հարությունյան Բ. Հ., 2004, 91:

27 Муравьев С. Н., 1983, N 1, 117–147. Նշենք, որ հեղինակի վերոհիշյալ վարկածը որոշ պատմաբանների կողմից թերահավատորեն է ընդունվում, սակայն նորագույն երկրաբանական հետազոտությունները, ըստ երևույթին, խոսում են Ս.Ս.Մուրավյովի վարկած օգտին: Найденов В. И., 2001. 407. «Возникает вопрос: возможно ли такое повышение уровня при достаточно малом изменении современного климата Земли? Оказывается, возможно: небольшое /до 10%/ увеличение среднегодовой нормы осадков в бассейне моря вызывает уменьшение испарения /до 10%/ и увеличивает речной сток, что, в свою очередь, способствует подъему уровня вод в море и уменьшению испарения / до 10%/ с мелководий Северного Каспия. Здесь главным является то обстоятельство, что указанные механизмы действуют совместно. Увеличение площади моря может достигнуть 30%...»:

28 Յարութինյան Բ., 1999, 85:

29 Հերոդոտոս, III, 198:

30 Հերոդոտոս, I, 203:

տիրապետության մասին, ինչպես նաև քաջ գիտենալով մատիեններին, սասպեյրներին, ալարոդներին և կասպերին, այս տարածքներում նրանց գոյության վերաբերյալ որևէ ակնարկ չի անում: Հերոդոտոսի՝ Կովկասյան Մեծ լեռնաշղթայի նկարագրության այս երկու հատվածների և հնագիտական նյութերի համեմատությունը պարզորոշ ցույց է տալիս, որ Կովսիդայից մինչև Սուրամի լեռներ գործ ունենք ապահարկ ցեղերի հետ, իսկ արևելքում այս երկու աղբյուրների համեմատությունից պարզվում է, որ Աքեմենյանների որևէ տիրապետություն երբևիցե գոյություն չի ունեցել: Անդրադառնալով Կազբեկի գանձին³¹ նշենք, որ աքեմենյան մետաղագործության նմուշները հայտնաբերվել են կոբանյան մշակույթի ուշ տարբերակների հետ միասին և պարզորոշ երևում է, որ աքեմենյան տիպի իրերի ներկայությունը այս գանձում ոչ թե ուղղակի աքեմենյանների առկայության, այլև ազդեցության արդյունք է: Հետաքրքիրն այն է, որ ոչ Կովսիդայում, ոչ էլ Դարյալի կիրճի հատվածում՝ Վերին Լարսից մինչև Կազբեգի³² մինչ այժմ Աքեմենյան տիպի որևէ հուշարձան չի հայտնաբերվել և չեն նկատվում նաև սահմանային ամրությունների այնպիսի հետքեր, ինչպիսիք առկա են Կուրի և Ալազանի աջափնյակներում: Աքեմենյանների հանդուրժողականությունը այս ցեղերի նկատմամբ, ըստ երևույթին, պայմանավորված էր վերը նշված տարածքների ռազմավարական նշանակությամբ, որոնք որպես բուֆերային գոտի՝ պետք է օգտագործվեին հյուսիսից եկող հարձակումների դեմն առնելու նպատակով: Այժմ փորձենք կրկին անդրադառնալ XVIII սատրապության տեղորոշման, սահմանների և վերջինիս տարածքն զբաղեցնող ցեղերի էթնիկ պատկանելությանը: Այս խնդրի լուծման համար շատ կարևոր նշանակություն ունի Այսրկովկասում սկյութական տիպի հուշարձանների տարածման աշխարհագրական առանձնահատկությունների քննությունը: Ինչպես նաև սկյութական արշավանքների երթուղիների պարզաբանումը: Այսրկովկասում հայտնաբերված սկյութական տիպի արտեֆակտները հստակ բաժանվում են երկու ժամանակագրական խմբերի, որոնք ունեն տարածման տարբեր աշխարհագրական արեալներ: Արխայիկ տիպի սկյութական հուշարձանները, որոնք թվագրվում են Ք.ա. VII–VI–րդ դդ., հիմնականում տարածված են Կենտրոնական և Արևմտյան Վրաստանում՝ /ներառյալ Աբխազիան և Հարավային Օսիան/ Սցխեթից մինչև Սև ծովի տարածաշրջան³³: Ք.ա. VI–րդ դարից հետո սկյութական տարրերի քանակը այս տարածաշրջանի նյութական մշակույթում կտրուկ նվազում է³⁴: Նշենք, որ սկյութական մշակույթի արխայիկ տարրերի ներթափանցում սույն ժամանակաշրջանում նկատվում են նաև Հայաստանի ուրարտական կենտրոններում³⁵: Այս տարածաշրջանի հուշարձաններում չկան գտածոներ, որոնք կարելի կլիներ մեկնաբանել որպես թշնամիների կողմից սկյութական զենքի օգտագործման փաստ, չեն նկատվում նաև ավերածությունների հետքեր³⁶: Նույն պատկերն առկա է

31 Смирнов Я. И., 1909, III, 13, 14.

32 Лордкипанидзе О., 1989, 313.

33 Есаян С. А., Погребова М. Н., 1985, 38–39.

34 Նույն տեղում, էջ 38–39:

35 Նույն տեղում, 38:

36 Նույն տեղում, 39:

նաև ուրարտական ժամանակաշրջանի հուշարձաններում: Այս առիթով Բ. Պիոտրովսկին նշում է, որ ուրարտական կենտրոնների ավերածություններին նախորդել են բավականին խաղաղ սկյութա-ուրարտական մշակութային փոխառնչություններ, որը արտացոլված է Թեյշեբաինիի և այլ հուշարձանների նյութական մշակույթում³⁷: Բոլորովին այլ է պատկերը Այսրկովկասում /Ապշերոնի թերակղզի, Կախեթ, Ուտիք/՝ այստեղ սկյութական տիպի արխայիկ նյութերը հիմնականում ներկայացված են նետասլաքների տեսքով և որպես կանոն՝ գտնվել են այս հուշարձանների վերին շերտերում և, ըստ երևույթին, կապված են սկյութների ռազմական գործողությունների հետ³⁸: Այստեղ պեղվել են դամբարաններ, որտեղ երևում է, որ հանգուցյալը սպանվել է սկյութական զենքով, այսինքն՝ նետասլաքը մխրձված է հանգուցյալի ոսկորների մեջ³⁹: Միաժամանակ փաստենք, որ Ք.ա. VII-VI-րդ դդ. սկյութական նյութական մշակույթի ներթափանցում այս տարածքներում չի նկատվում⁴⁰: Իրադրությունը փոխվում է Ք.ա. VI-IV-րդ դդ., երբ սկյութական հուշարձաններն այս անգամ կենտրոնում են Այսրկովկասի հյուսիսասեյան հատվածում՝ Ուտիքում և Կախեթում⁴¹: Նշենք, որ այս տարածքներում հայտնաբերված սկյութական նյութերը թե՛ ժամանակագրորեն, թե՛ տիպաբանորեն էապես տարբերվում են արխայիկ տիպի սկյութական արտեֆակտներից:

Ելնելով վերը բերված հնագիտական փաստերից⁴² և Ստրաբոնի վկայությունից. «Սակերը նվաճեցին Հայաստանի լավագույն /մարզը/, որը նրանց անունից կոչվեց Սակասենե»⁴³, Ուտիքում սկյութների հաստատումը պետք է թվագրել Ք.ա. VI-VII դարերով:

Այժմ անդրադառնանք սկյութական արշավանքների երթուղիներին: Պատմահայր Հերոդոտոսը տեղյակ է միայն սրանցից մեկի մասին և այս առիթով հաղորդում է հետևյալը. «Մեյոտիս լճից մինչև Փասիս գետը և Կոլխերի երկիրը երեսուն օրվա ճանապարհի է անխոնջ ուղևորի համար: Կոլխիսից Մեդիա ավելին չէ ճանապարհը, բայց նրանց միջև բնակվում է մի ազգ, սասպերները. սրանց միջով անցնելուց հետո կարելի է հասնել Մեդիա: Այսուհանդերձ, սկյութներն այս ճանապարհով չներխուժեցին Մեդիա, այլ շեղվեցին դեպի վերին, շատ ավելի երկար ճանապարհը՝ Կովկաս լեռը ունենալով իրենց աջ կողմում: Այստեղ մեղացիները ճակատեցին սկյութների դեմ և մարտում պարտվելով, կորցրին իրենց իշխանությունը և սկյութները տիրացան ամբողջ Ասիային»⁴⁴: Ի. Դյակոնովը քննության ենթարկելով այս տեղեկությունը՝ իրավացիորեն ցույց է տվել պատմահոր կողմից իրադարձությունների ներկայացման ժամանակագրական անճշտությունները, քանզի Հերոդոտոսի հաղորդման համաձայն՝ մարերի բախումը սկյութների հետ տեղի է ունեցել Կյուրոսի՝ Աժդահակին հաղթելուց 75 կամ 103 տարի

37 Пиотровский Б. Б., 1959, 245.

38 Есаян С. А., Погребова М. Н., 1985, 38.

39 Նույն տեղում, 38:

40 Նույն տեղում:

41 Նույն տեղում, 39:

42 Նույն տեղում, 38:

43 Ստրաբոն, 1940, XI, 8, 4:

44 Հերոդոտոս, I, 104:

առաջ, այսինքն Ք.ա. 625 կամ 653 թթ., իսկ աշկուզա սկյութների առաջին հիշատակությունը վերաբերում է Ք.ա. VII դարի 70-ական թթ.: Ականավոր արևելագետը, հիմք ընդունելով կիմմերների՝ Այսրկովկասում Ք.ա. VIII դարի վերջում հայտնվելու հանգամանքը գտնում է, որ Հերոդոտոսը սխալվում է սկյութների մուտքը Այսրկովկաս կիմմերներին ուղղակի հետապնդելու արդյունք ներկայացնելով⁴⁵: Սկյութների կողմից կիմմերների ուղղակի հետապնդման կարծիքը թերևս այլ մեկնաբանությամբ ժխտվում է նաև Մ. Արտամանովի կողմից⁴⁶:

Անդրադառնալով կիմմերների և սկյութների արշավանքների պատճառներին՝ Մ. Արտամանովը հակված է դրանք կապել բնակլիմայական գործոնների հետ⁴⁷: Ինչևէ, Հերոդոտոսի՝ Ք.ա. VII-VIII դդ. վերաբերվող այս վկայությունը պատմական հիշողության կորսված, ձևափոխված և միաժամանակ շերտավորված, տարաժամանակյա տարրեր պարունակող կարևոր պատմական հաղորդում է: Անգլիացի պատմաբան Ե. Մինգը անդրադառնալով Հերոդոտոսի վերը բերված⁴⁸ և հետևյալ համանման վկայությանը. «Հայտնի է նաև, որ սկյութները, կիմմերներին հետապնդելիս, շեղվել են ճանապարհից և ներխուժել Մեդական երկիր, քանզի կիմմերները մշտապես շարժվում էին ծովափով, իսկ սկյութները նրանց հետապնդում էին Կովկասն աջ կողմում ունենալով, մինչև որ մտնում են Մեդական երկիր և շեղվում իրենց ուղուց դեպի միջերկրափը: Այս գրույցը նույն ձևով պատմում են և՛ հելլենները, և՛ բարբարոսները»⁴⁹, որ այստեղ հիշատակվող Կովկաս լեռը վերաբերում է ոչ թե ամբողջովին Կովկասյան մեծ լեռնաշղթային, այլ նրա կենտրոնական հատվածում վեր խոյացող Կազբեկ լեռանը⁵⁰: Վերջինիս կարծիքով սկյութները, ըստ երևույթին, անցնելով Դարյալի լեռնանցքը՝ իրենց աջ կողմում թողել են Կազբեկ լեռը: Ե. Մինգի այս կարծիքը իր մեջ պարունակում է ճշմարտության հատիկներ: Զժխտելով սկյութական արշավանքների դերբենդյան ուղղության հնարավորությունը՝ Հ. Մանանդյանը նախապատվությունը տալիս է մեռտա-կողքիսյան ճանապարհին⁵¹: Բ. Պիոտրովսկին հետազոտելով Այսրկովկասում առկա սկյութական տիպի հնագիտական նյութերը՝ հանգել է այն եզրակացության, որ սկյութների ներթափանցումը դեպի Այսրկովկաս պետք է կատարվեր տարբեր ուղղություններով և տարբեր տեղերից⁵²: Սրանցով են բացատրվում Արևելյան և Արևմտյան Այսրկովկասի սկյութական հուշարձանների հնագիտական նյութերի միջև եղած տարբերությունները⁵³: Նույն մտքին է հանգել նաև Ե. Կրուպնովը՝ քարտեզագրելով Այսրկովկասում հայտնի հնագիտական գտածոները⁵⁴: Ըստ Ե. Կրուպնովի սկյութական արշավանքները Այսրկովկաս իրականացվել են

45 Дьяконов И. М., 1956, 245–246.

46 Артаманов М. И., 1974, 25–27.

47 Նույն տեղում:

48 Հերոդոտոս, I, 104:

49 Հերոդոտոս, IV, 12:

50 Minns E. H., 1929, vol. III.

51 Մանանդյան Հ., 1944, 6–12:

52 Пиотровский Б. Б., 1959, 245.

53 Նույն տեղում, 245:

54 Крупнов Е. И., 1954, 186–194.

չորս ուղղություններով՝ Մեռտա-կողքիսյան ճանապարհով և Մամիսոնի, Դարյալի և Դերբենդի լեռնանցքներով⁵⁵: Վ. Վինոգրադովը, ելնելով Այսրկովկասում սկյութական տիպի հնագիտական հուշարձանների տեղաբաշխման խտությունից, նախապատվությունը տալիս է Դարյալի ուղղությանը⁵⁶: Վերջինս Մադեսի արշավանքի երթուղին բացառություն է համարում⁵⁷: Այն, որ Մադեսի արշավանքի երթուղին անցել է Կովկասյան մեծ լեռնաշղթայի հյուսիսային հատվածով, և որ սկյութները եղել են Դերբենդում ու այս արշավանքի ընթացքում Այսրկովկաս են մտել հենց այս ճանապարհով, հաստատվում է հնագիտական նյութերով⁵⁸: Դերբենդի ամրոցը, որը հիմնադրվել է Ք.ա. VIII-VII դդ. սահմանագլխին, Ք.ա. VII դարում սկյութների կողմից ավերածությունների է ենթարկվել, ինչը հաստատվում է հրդեհի շերտի և այս շերտում սկյութական տիպի նետասլաքների առկայությամբ⁵⁹: Այս երթուղու օգտին են խոսում նաև Ապշերոնի թերակղզում սկյութական նյութերի գոյության փաստերը⁶⁰: Ապշերոնի թերակղզու Գյուրգյան հնավայրի սրբավայրում և քարակղերից մեկում ևս հայտնաբերվել են սկյութական տիպի նետասլաքներ⁶¹: Հետաքրքիրն այն է, որ Ք.ա. VII-VI դդ. սահմանագլխին Ապշերոնի թերակղզու մի շարք հուշարձաններ դադարեցնում են իրենց գոյությունը, սակայն ցուցումներ, որոնք կօգնեին դրա պատճառների բացահայտմանը, ուսումնասիրող հնագետների կողմից չեն տրվում⁶²: Ըստ երևույթին, այս ամենը ևս կապված է սկյութական արշավանքների հետ կամ, թերևս, Կասպից ծովի մակարդակի բարձրացման, քանի որ ավերածությունների հետքեր այս հուշարձաններում գրեթե չեն նկատվում: Ի մի բերելով սկյութական արշավանքների վերաբերյալ պատմահնագիտական աղբյուրները՝ կարող ենք փաստել, որ սրանք իրականացվել են Կովկասյան մեծ լեռնաշղթայի երեք հիմնական՝ արևմտյան, կենտրոնական և արևելյան ուղղություններով: Հնագիտական աղբյուրները փաստում են, որ սկյութական ցեղերը սկզբնական շրջանում /Ք.ա. VII դ. 2-րդ կես/ հաստատվել են Կենտրոնական /Կուրից հյուսիս և Արագվի գետից մինչև Սուրամի լեռնաշղթա ընկած տարածքներում/⁶³ և Արևմտյան Վրաստանում⁶⁴: Ինչ վերաբերում է Արևելյան Այսրկովկասի որոշ հատվածներին, ապա այստեղ, չնայած ավերածություններին, սկյութական տարրի առկայություն վերը նշված ժամանակահատվածում չի նկատվում⁶⁵: Ք.ա. VI դ. սկյութական տարրերի ազդեցությունը այս տարածքներում խիստ նվազում է⁶⁶: Հետաքրքիրն այն է, որ Ք.ա. VI դ. վերջում Կենտրոնական Վիրքի տարածքում ուսումնասիրված

55 Նույն տեղում:

56 Виноградов В. Б., 1964, 35-36.

57 Նույն տեղում:

58 Кудрявцев А. А., 1982, 27-43.

59 Նույն տեղում:

60 Есаян С. А., Погребова М. Н., 1985, 21.

61 Есаян С. А., Погребова М. Н., 1985, 21.

62 Նույն տեղում:

63 Նույն տեղում, 39:

64 Նույն տեղում:

65 Асланов Г. О., 1980, 80.

66 Есаян С. А., Погребова М. Н., 1985, 39.

գրեթե բոլոր հուշարձանները անկում են ապրում և դադարեցնում իրենց գոյությունը⁶⁷: Միաժամանակ այս բոլոր բնակավայրերում արձանագրվում են բռնի ավերածությունների և ուժեղ հրդեհների հետքեր: Կենտրոնական Վիրքի գրեթե բոլոր հուշարձաններում Ք.ա. VI դարի վերջից մինչև Ք.ա. IV դարի վերջը նկատվում է կյանքի որոշակի ընդհատում⁶⁸: Բացառություն է կազմում Կուրի աջափնյակում գտնվող Խովլե-Գորա հուշարձանը⁶⁹: Ճիշտ է, Ք.ա. V դ. այստեղ կյանքը շարունակվում է, բայց նկատվում են մշակութային նորամուծություններ, որոնք որևէ կապ չունեն նույն հուշարձանի ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններին վերաբերող հնագիտական մշակույթների հետ⁷⁰: Նշենք, որ վերը բերված մշակութային նորամուծությունները նկատվում են նույն հուշարձանի Ք.ա. VI դարի շերտում⁷¹: Նույնանման նորամուծություններ նկատվում են նաև Թոեղք⁷², Թեթրի-ծղարո⁷³, Գարդաբանի⁷⁴ հնավայրերում: Ուսումնասիրողները Խովլե 3-րդ շինարարական հորիզոնի մշակութային նորամուծությունները կապում են «ուրարտական էթնիկ տարրի» ներթափանցման հետ, իսկ Խովլե 2-րդի⁷⁵ և Կուրի աջափնյակի այս նորամուծությունները՝ աքեմենյան մշակույթի ուղղակի ազդեցության հետ⁷⁶: Պետք է նշել, որ Խովլե Գորա 3-րդի հնագիտական նյութերը բաղդատվում են ուրարտական նյութերի հետ, սակայն հաշվի առնելով վերջիններիս ժամանակագրությունը և տիպաբանական տարբերությունները՝ գտնում ենք, որ դրանք, ինչպես նաև Խովլե-Գորայի շերտը և վերը նշված հնագիտական արտեֆակտները կապված են վաղ հայկական մշակույթի հետ և նույնական են Արարատյան դաշտի, Գուգարքի, Ուտիքի նյութերին⁷⁷: Այստեղ գործ ունենք վաղ հայկական մշակութային ամբողջականության հետ ակնհայտորեն զգացվում է, ինչն էլ նյութից անտեղյակ ուսումնասիրողների մոտ որոշ շփոթությունների տեղիք կարող է տալ և նաև տվել է: Սակայն վերը նշված նյութերի պատկանելությունը վաղ հայկական մշակույթին, անշուշտ, վերջնականապես ապացուցված կարելի է համարել⁷⁸:

Մեր կարծիքով, Ք.ա. VI-IV դդ. տեղի ունեցած այս իրողությունները պահպանվել են վրացական ավանդության մեջ. «...մինչ այժմ /երուսաղեմի գրավումը Նաբուգոդոնոսորի կողմից/ Քարթլոսյանների լեզուն հայերենն /սոմխուրի/ էր, որով և խոսում էին: Իսկ երբ անհամար ժողովուրդներ ժողովեցան Քարթլիում, այն ժամանակ վրացիք թողին հայերեն /սոմխուրի/ լեզուն, և այս բոլոր ժողովուրդներից գոյացավ վրացերեն /քարթուլի/»

67 Лордкипанидзе О., 1989, 312.

68 Նույն տեղում:

69 Мусхелишвили Д. Л., 1978, 98-102.

70 Նույն տեղում:

71 Նույն տեղում:

72 Куфтин Б. А., 1941, 41-50. Гагошидзе Ю. М., 1982, 63-109.

73 Давлианидзе Ц. О., 1977, 122-126.

74 Նույն տեղում:

75 Мусхелишвили Д. Л., 1978, 98-102.

76 Давлианидзе Ц. О., 1977, 122-126.

77 Чаршачянյан Ի. Ա., 2003, 41:

78 Тер-Мартirosов Ф. И., 1993, 59-65, Նույնի, 1999, 32-46:

լեզուն»⁷⁹: Բ. Հարությունյանը այս ավանդության վերաբերյալ տվել է հետևյալ մեկնաբանությունը. «Սպերում և նրա շրջակայքում՝ այլ խոսքով, Ճորոխ գետի ավազանի արևմտյան մասում հաստատված հնդեվրոպական սկյութական ցեղախմբերը, որոնք ներգրավվել էին հայագոյացման ոլորտը և հայացել էին, մի մասով դեպի հյուսիս շարժվելով, հաստատվում են Վիրքի տարածքում, և, գերազանցելով ռազմական ու տնտեսական առումով տեղաբնիկ քարթական ցեղերին, իրենց գերիշխանության տակ են գցում վերջիններին: Սկյութական ցեղերի Ճորոխի ավազանում հաստատվելու մասին մենք դեռ կխոսենք, իսկ այժմ նշենք, որ այն իրողությունը, երբ քարթական ցեղերի վրա իշխանություն հաստատածների լեզուն հայերենն էր կամ հայերենի բարբառներից մեկը, հետագայում եկվորներին ուծացրած քարթական ցեղերի շրջանում պետք է այն միտքը ծներ, որ իրենք՝ վրաց ժողովուրդը, ինչ-որ ժամանակ հայախոս է եղել»⁸⁰: Հարգելով երջանկահիշատակ հայագետի՝ բավականին տրամաբանական և հետաքրքիր մեկնաբանությունը՝ չենք կարող համաձայնել նրա կողմից առաջադրված տեսակետի հետ, քանզի, դատելով հնագիտական աղբյուրներից՝ Ք.ա. VI դ. վերջին Կենտրոնական Վիրքի տարածքը ամայացած էր⁸¹ և ըստ երևույթին սկյութական տարրերը այս տարածքներից հեռացել էին՝ հաստատվելով Կախեթի⁸², Ուտիքի⁸³ և Գուգարքի⁸⁴ տարածքներում: Այստեղ առկա սկյութական տիպի հուշարձանները թվագրվում են Ք.ա. VI և մեծ մասամբ V–IV դդ.⁸⁵:

Վերը նշված որոշակի դադարից հետո, որն արձանագրվում է Ք.ա. V–IV դդ. ընթացքում Արևելյան Վրաստանի տարածքում, Ք.ա. IV դ. վերջում և Ք.ա. III դ. սկզբին նկատվում են մշակութային նորամուծություններ և փոփոխություններ, որոնք բացարձակ որևէ կապ չունեն Արևելյան Վրաստանում վկայված նախորդ ժամանակաշրջանների հնագիտական մշակույթների հետ: Այս նոր փոփոխությունները վրաց հնագետների կողմից բնութագրվում են «ուրբանիստական պայթյուն» եզրույթով⁸⁶: Սա նոր քաղաքների և տաճարային համալիրների հինադրման ժամանակաշրջան էր, որում զարմանալիորեն նկատվում են աքեմենյան և փոքրասիական մշակույթների ազդեցությունները⁸⁷: Հատկանշական է, որ աքեմենյան մշակույթի վերապրուկները Արևելյան Վրաստանի տարածքում շարունակվում են մինչև Ք.ա. I դ.⁸⁸: Ելնելով վերը բերված իրողություններից՝ Վրաստանի տարածքում պեղված հուշարձանները, որոնք նախկինում վերագրվում էին աքեմենյան շրջանին, այժմ վերաթվագրվում են հելլենիստական ժամանակաշրջանով⁸⁹: Հետաքրքրական նորություններ են նկատվում նաև այս ժամանակաշրջանի

79 Մելիքսեթ-Բեկ Լ., 1934, 143–149:

80 Հարությունյան Բ., 2001, 77:

81 Лордкипанидзе О., 1989, 312.

82 Есаян С. А., Погребова М. Н., 1985, 38.

83 Նույն տեղում:

84 Тер-Мартirosов Ф. И., 2006, 299:

85 Есаян С. А., Погребова М. Н., 1985, 38.

86 Хачутайшвили Д. А., 1973.

87 Цкитишвили Г. Г., 1977, 87–93.

88 Гагошидзе Ю. М., 1977, 122–126.

89 Лордкипанидзе О., 1989, 309–312.

խեցեգործության բնագավառում: Սամաղլոյի գունազարդ խեցեղենը ուղղակի գուգահեռներ ունի ուշ փոյուզիական խեցեղենի հետ⁹⁰: Մշակության այս նորամուծությունները Ֆ. Տեր-Մարտիրոսովը կապում է Փոքր Ասիայի կենտրոնական շրջաններից գաղթած էթնիկ տարրերի տեղաշարժերի հետ և գտնում, որ քարթական ցեղերը Վրաստան են տեղափոխվել Փոքր Ասիայի կենտրոնական շրջաններից⁹¹: Ավելացնենք, որ քարթական ցեղերի արևմտյան ծագման վերաբերյալ փոքր-ինչ տարբերվող մեկնաբանությամբ նմանատիպ վարկած է առաջադրել նաև Գ. Մելիքիշվիլին⁹²: Ինչևէ, չխորանալով այս խնդրի մեջ, քանի որ վերջինս դուրս է մեր քննության շրջանակներից, ելնելով պատմահնագիտական աղբյուրներից՝ կարող ենք փաստել, որ վրաց էթնոգենեզի գործընթացում կարևոր բաղադրատարրեր են եղել տեղական, սկյութական, հայկական, փոքրասիական տարրերը:

Աքեմենյան տերության սատրապությունների ցանկը թվարկելիս՝ Հերոդոտոսը նշում է. «Սատիենների, սասպեյրների և ալարոդների վրա սահմանված էր երկու հարյուր տաղանդ հարկ. սա տասնութերորդ նահանգն էր»⁹³: XVIII սատրապությունը Կուր գետի և Կովկասյան լեռնաշղթայի միջև տեղակայող ուսումնասիրողները մատիեններին տեղորոշում են ներկայիս Վրաստանի հանրապետության հարավարևմտյան շրջաններում հաստատված մոսխերի կամ մոսքերի հարևանությամբ, նրանցից հյուսիս ընկած տարածքներում⁹⁴, սասպեյրներին՝ Կենտրոնական Վիրքի⁹⁵, ալարոդներին՝ բուն Աղվանքի /Ալազան գետի միջին հոսանքի երկու ափերից ներառյալ/ շրջաններում⁹⁶, ընդ որում, հետազոտողների կարծիքով նշված ցեղերը պատկանել են սկյութական աշխարհին⁹⁷: Այս առիթով Բ. Հարությունյանը գրում է. «Սասպեյր անունը հավաքական անվանում էր, և այդ ցեղախմբի մեջ բազմաթիվ ցեղեր և անգամ ցեղային փոքր խմբեր էին գտնվում: Ամեն ինչից դատելով՝ դրանց թվում էին մատիենները և ալարոդները»⁹⁸: Տարածաշրջանի հնագիտական պատկերի քննության ընթացքում, ինչպես սկզբում ասվեց, սասպեյրների և մատիենների տեղորոշումը այս հատվածներում հնարավոր էր միայն Ք.ա. VII դ. 2-րդ կեսից մինչև VI դ. վերջն ընկած ժամանակահատվածում⁹⁹, քանզի Ք.ա. VI դ. վերջից մինչև IV դ. վերջն ընկած ժամանակահատվածում վերը բերված իրադարձությունների պատճառով այս տարածքները ամայացած էին և գրեթե անմարդաբնակ¹⁰⁰, իսկ ալարոդների տեղորոշումը ողջ Աղվանքի տարածքում մեծ դժվարություններ է հարուցում, քանզի հետազոտողների կողմից այս տարածքում սկյութական հոծ գաղ-

90 Гагошидзе Ю. М., 1982, 75.

91 Тер-Мартirosов Ф. И., 1995, 20.

92 Меликишвили Г. А., 1955, 134–136.

93 Հերոդոտոս, III, 94:

94 Յարութինյան Բ., 1999, 66, Խորիկյան Հ., 2007, 25–35:

95 Նույն տեղում, 82:

96 Նույն տեղում, 84–102:

97 Նույն տեղում, 84:

98 Նույն տեղում:

99 Есаян С. А., Погребова М. Н., 1985, 39.

100 Лордкипанидзе О., 1989, 309–312.

թականության և դաշտային սկյութների տեղորոշման վարկածը¹⁰¹ չի հաստատվում հնագիտական աղբյուրներով, որովհետև այստեղ պեղված հնավայրերից միայն Ապշերոնի թերակղզու շրջանում են հայտնաբերվել սկյութական տիպի նետասլաքներ, և այս գտածոները հետազոտողները կապում են սկյութական արշավանքների հետ՝ դրանք թվագրելով Ք.ա. VII դ. 2-րդ կեսով և VI դ. սկզբով¹⁰²: Ք.ա. VII-VI դդ. սահմանագծին Ապշերոնի թերակղզում վկայված այս բնակավայրերը ուսումնասիրողների համար անհայտ պատճառներով դադարեցնում են իրենց գոյությունը¹⁰³: Մեր կարծիքով այս բնակավայրերի անկումը կապված է սկյութական արշավանքների, ինչպես նաև Կասպից ծովի մակարդակի բարձրացման հետ:

Անդրադամնալով Հերոդոտոսի I, 104 վկայությանը՝ Շպիգելը¹⁰⁴, Ի. Դյակոնովը¹⁰⁵, դրանում արծարծված Մեդիա հատուկ անունը վերագրում են ոչ թե պատմական Մեդիայի, այլ մարական տերության սահմաններին: Մեր կարծիքով, մատիենների և ալարոդների նույնացումը սասպեյրների հետ քիչ հավանական է և հակասությունների մեջ է մտնում Հերոդոտոսի I, 104, II, 94, IV, 40, IV, 37, VII, 79 վկայությունների հետ: Հիմք ընդունելով Հերոդոտոսի I, 104 վկայությունը՝ կարծիք է հայտնվել, որ սասպեյրները մարերին սահմանակցել են Կուր գետի ստորին հոսանքի շրջանում և Կողքիսից Մեդիա ճանապարհին անցել է Կասպից ծովի արևմտյան շրջաններով և Կուրի հովտով¹⁰⁶: Պարսից ծոցից մինչև Սև ծովն ընկած տարածքների ժողովուրդներին նկարագրելիս բերվում են երկու համանման վկայություններ, որոնցից առաջինում պատմահայրը պատմում է հետևյալը. «Պարսիկները բնակվում են մինչև Հարավային ծովը, որը կոչվում է Կարմիր, նրանցից վերև՝ դեպի հյուսիս, բնակվում են մեդացիները, մեդացիներից /վերև/ սասպեյրները, սասպեյրներից /վերև/ կոլխերը, տարածվելով մինչև Հյուսիսային ծովը, որտեղ թափվում է Փասիս գետը: Ահա այս չորս ազգերն են բնակվում մեկ ծովից մյուսն /ընկած երկրում/»¹⁰⁷: Երկրորդում Հերոդոտոսը բերում է հետևյալ վկայությունը. «Ասիայի այս երկրները գտնվում են Պարսկաստանից արևմուտք: Պարսիկներից, մեդացիներից, սասպեյրներից և կոլխերից վերև, դեպի արևելք, գտնվում է Կարմիր ծովը, դեպի հյուսիս՝ Կասպից ծովը և Արաքս գետը, որը հոսում է դեպի արևելք»¹⁰⁸: Համադրելով պատմահոր վերոհիշյալ հաղորդումները, նրա մեկ այլ «Քանգի մեդական տերության հետ և յուդիական տերության միջև սահմանը Հայուս գետն էր, որը հոսում էր Հայկական լեռներից Կիլիկիայի միջով, այնուհետև /հոսում է/ աջից մատիեններին և ահյակից փոյուգիացիներին ունենալով» վկայության հետ, /Հերոդոտոս, I, 72/, նախ հարց է ծագում, թե ինչու՞ Հերոդոտոսը, քաջատեղյակ լինելով Հալիսից արևելք գտնվող ժողովուրդների մասին, մասնավորապես՝

101 Խորիկյան Հ. Գ., 2010, 33–35:

102 Есаян С. А., Погребова М. Н., 1985, 21.

103 Асланов Г. О., 1980, 80. Есаян С. А., Погребова М. Н., 1985, 21.

104 Spiegel Fr., 1873, 245.

105 Дьяконов И. М., 1956, 339.

106 Խորիկյան Հ. Գ., 2008, 138–142:

107 Հերոդոտոս, IV, 37:

108 Հերոդոտոս, IV, 40:

արմեններին, անտեսում է վերջիններին: Կամ հարցական է մնում հետևյալ հանգամանքը. Պարսից ծոցից մինչև Սև ծովն ընկած տարածքների նկարագրության պարագայում Հերոդոտոսը տրամաբանորեն պետք է անդրադառնար հյուսիս-արևմուտք ուղղությանը, իսկ այս նկարագրության դեպի հյուսիսարևելք շեղումը, մեղմ ասած, անհասկանալի է դառնում: Ինչպես վերը նշել ենք, անդրադառնալով Հերոդոտոսի I, 104 վկայությանը՝ Ֆր. Շպիգելը¹⁰⁹ և նրան համակարծիք Ի. Դյակոնովը¹¹⁰, գտնում են, որ վերջինս վերաբերում է ոչ թե պատմական Մեդիայի շրջանին, այլ Մարական տերության սահմաններին: Ընդունելով վերը հիշատակված տեսակետը՝ այն կարծիքին ենք, որ ինչպես վերոբերյալ Մեդիա տերմինն է վերաբերում մարական տերության սահմաններին, այնպես էլ մեղացիներ եզրույթը վերաբերվում է ոչ միայն մեղացիներին, այլև նրանց հպատակ ժողովուրդներին:

Հարց է ծագում, թե ինչու՞ Հերոդոտոսը, քաջատեղյակ լինելով մատիններին ու ալարոդներին, վերջիններին նույնացնում է սասպեյրների հետ և Կողքիսից Մեդիա կամ ավելի ձիշտ Մարական տերության սահմանները նկարագրելիս, ծանոթ լինելով վերջիններին, անդրադառնում է միայն սասպեյրներին: Մատինների՝ մոսքերից կամ մոսխերից հյուսիս տեղորոշումը ուղղակի հակասության մեջ է մտնում տարածաշրջանի հնագիտական պատկերի և Հերոդոտոսի III, 97 վկայության հետ, քանզի այս տարածքները Հերոդոտոսի շրջանում ամայի էին¹¹¹, ինչը պայմանավորված էր վերը նշված հայտնի պատճառներով: Հնագիտական և գրավոր սկզբնաղբյուրների համադրությունը խոսում է մոսքերի փոքրասիական ծագման մասին վարկածի օգտին և ըստ երևույթին վերջիններս ժամանակակից Մեսիսեթի տարածքում հաստատվել են Ք.ա. IV–III դդ. ընթացքում, որը հաստատվում է հնագիտական նյութերով¹¹²: Ալարոդների տեղորոշման հարցում կրկին հաշվի առնելով հնագիտական աղբյուրները՝ հակված ենք այն մտքին, որ վերջիններս պետք է տեղորոշվեն ներկայիս Կախեթի տարածքում, և, հաշվի առնելով Գումբաթի¹¹³ հնավայրի տեղադրությունը, սրանց արևելյան սահմանը պետք է լիներ Ալազան գետի աջափնյակը:

Ինչ վերաբերում է սասպեյրների տեղադրությանը, ապա կրկին, հիմք ընդունելով տարածաշրջանին վերաբերող հնագիտական աղբյուրները, այն կարծիքին ենք, որ վերջիններս բնակվել են Սպերի, Արևմտյան Տայքի, Արևմտյան Գուգարքի, ներկայիս Մեսիսեթի և Արևելյան Վրաստանի՝ Կուրի աջափնյակից մինչև Թռեղքի լեռնաշղթայի հարավային հատվածներն ընկած, ինչպես նաև ներկայիս Ռուսթավիի և Գարդաբանիի շրջաններում, քանզի այս տարածքներից հյուսիս ընկած հատվածում, ինչպես վերը նշել ենք, Հերոդոտոսի շրջանում ուղղակի ամայություն էր տիրում¹¹⁴: Մատիններին, ըստ երևույթին, պետք է տեղորոշել Բարձր Հայքի և Փոքր Հայքի սահմանամերձ շրջաններում:

109 Spiegel Fr., 1873, 245.

110 Дьяконов И. М., 1956, 339.

111 Лордкипанидзе О., 1989, 309–312.

112 Նույնի, 275.

113 Florian S. Knaau, 2000, 119–130.

114 Лордкипанидзе О., 1989, 309–312.

Այժմ անդրադառնանք Կենտրոնական Վիրքի տարածքում Ք.ա. V–IV դդ. առկա ժողովրդագրական իրադրությանը:

Հայտնի է, որ Ք.ա. IV դ. վերջում Կենտրոնական Վիրքի տարածքում առկա հնագիտական հուշարձանները անկում են ապրում, և կյանքը այս տարածքներում Ք.ա. V–IV դդ. լիակատար դադարի մեջ է հայտնվում¹¹⁵: Ինչո՞վ էր պայմանավորված վերը հիշատակված հիրավի ժողովրդագրական այս մեծ աղետը: Նշենք, որ սկյութական տիպի արխայիկ հուշարձանները կենտրոնացված էին հատկապես Այսրկովկասի այս տարածքներում: Ուսումնասիրողների կարծիքով սկյութական տարրի ազդեցությունը հիշյալ շրջաններում խիստ նվազում է և գրեթե վերանում Ք.ա. VI դ. վերջում¹¹⁶: Հայտնի է Դարեհ Ա–ի սկյութական արշավանքի երթուղին¹¹⁷: Ինչու՞ Դարեհը ընտրեց այս երկար և բավականին դժվար երթուղին: Տրամաբանորեն ավելի հարմար երթուղի կարող էր լինել այսրկովկասյանը: Որո՞նք էին այս երթուղու ընտրության հիմնական խոչընդոտները: Աքեմենյանները քաջ գիտակցում էին, որ մտնելով սկյութական տարածքներ իրենց թիկունքում կունենային այսրկովկասյան սկյութների հարվածի վտանգը: Այսրկովկասյան երթուղին չընտրելու հիմնական պատճառներից մեկն այն էր, որ այս տարածքները Վիրահայոց և Աշոցքի լեռներից հյուսիս Աքեմենյանների վերահսկողությունից դուրս էին: Այն, որ Ք.ա. VI դ. վերջում աքեմենյանների հյուսիս–արևմտյան սահմանն անցնում էր վերը նշված տարածքներով, հաստատվում է հնագիտական աղբյուրներով, որովհետև այս տարածքներից հյուսիս Աքեմենյան շրջանի հայկական մշակույթի ազդեցության առկայությունը նկատվում է միայն Ք.ա. V–IV դդ.¹¹⁸: Ուստի այն կարծիքը, որ Աքեմենյանների հյուսիսային սահմանը Ք.ա. VI դ. եղել է Թռեղքի լեռնաշղթան, վերը բերված ապացույցների պատճառով ընդունելի համարվել չի կարող¹¹⁹: Մեր կարծիքով, Կենտրոնական Վիրքի տարածքի վերը նշված ժողովրդագրական աղետը, հավանաբար, կապված է Դարեհ Ա–ի գործունեության հետ, որը սկյութական արշավանքի անհաջողությունից հետո, վերստին զգալով սկյութական գործոնի վտանգը, ձեռնամուխ է եղել իր տերությանը անմիջապես սահմանակցող սկյութական տարրերի ոչնչացմանը: Ինչպես հնագիտական աղբյուրներն են ցույց տալիս, Կուրից հյուսիս գտնվող սասպեյրների հատվածը գրեթե ոչնչացվել է, իսկ Կուրից հարավ գտնվող նրանց ցեղակիցների մի մասը պահպանել է իրենց գոյությունը: Ընդունելով XVIII սատրապության՝ ավելի ուշ ստեղծված լինելու իրողությունը, գտնում ենք, որ վերջինս ստեղծվել է XIII սատրապության մասնատման և այլ տարածքների նվաճման սկզբունքով և համաձայն ենք այն կարծիքի հետ, որ վերջինս ձևավորվել է Ք.ա. 484–480 թթ. ընթացքում և կապված է Քսերքսեսի արտաքին քաղաքական գործունեության հետ¹²⁰: Հայկական տարրի ներթափանցումը վերը նշված տարածքներ, ըստ երևույթին, Աքեմենյանների կողմից ձեռնարկված հատուկ

115 Նույն տեղում:

116 Есаян С. А., Погребова М. Н., 1985, 39.

117 Հերոդոտոս, IV, 85:

118 Гагошидзе Ю. М., 1982, 63–115

119 Тер-Мартиросов Ф. И., 1998, 135.

120 Նույնի, 139.

քաղաքականության արդյունք էր, քանի որ իրենց համար դեռևս անծանոթ և ռազմավարական առումով կարևոր տարածքներում թերևս պետք է հավատարիմ էթնիկ հենարանի կարիքն ունենային, իսկ վաղ հայկական նյութերի առկայությունը Կուրի աջափնյակում /Խովլե-Գորա/¹²¹ ու ձախափնյակում /Գարդաբանի շրջան/¹²² այս քաղաքականությունն արտացոլող փաստերից է: Կասպից ծովի մակարդակի բարձրացման վերաբերյալ /Ք.ա. VI – Ք.հ. III դդ./ Ս. Մուրավյովի կողմից առաջադրված վարկածի¹²³ և տարածաշրջանի /նույն ժամանակաշրջանում/ հնագիտական պատկերի քննության և համադրման արդյունքում ստեղծվում է բավականին հետաքրքիր մի պատկեր, որի օգնությամբ որոշակի ճշգրտումներ կարելի է իրականացնել մասնավորապես Աքեմենյան տերության պետական սահմանների նաև ներքին վարչաքաղաքական բնագավառներում: Արդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կուրի ձախափնյակում, ինչպես նաև Միլի տափաստանի արևելյան և կենտրոնական հատվածներում ու Մուղանի դաշտում բացակայում են Աքեմենյան ժամանակաշրջանին վերաբերող հնագիտական արտեֆակտները¹²⁴, և որպես ուղենիշ ընդունելով Միլի տափաստանի արևմտյան շրջանում գտնվող Ք.ա. VII–I դդ. թվագրվող Կարա-թեփե հուշարձանը¹²⁵ կարծում ենք, որ Արաքս գետը Կասպից ծով է թափվել ներկայիս Միլի տափաստանի արևմտյան հատվածում, ուստի առաջարկում ենք XIII սատրապության հյուսիսարևելյան սահմանի հետևյալ աշխարհագրությունը: Սատրապության այս սահմանը սկսվում է Կասպից ծովով, այնուհետև կիսալուսնաձև ուրվագծով հասնում ներկայիս Եվլախ և Մինգեչաուր քաղաքների շրջանը: Այս տարածքները, ըստ երևույթին, գտնվել են Կասպից ծովի ափամերձ գոտում, այնուհետև Կուր գետով հասել Վիրահայոց, Աշոցքի և Եղնասարի լեռների արևմտյան հատված՝ հասնելով Կուր գետի ակունք: Իսկ ինչ վերաբերում է Աքեմենյան տերության հյուսիս-արևմտյան պետական սահմանին, ապա այստեղ առկա է ժամանակագրական երկու շերտ: Սկզբնական շրջանում Ք.ա. VI դ. վերջից մինչև Ք.ա V դ. 80-ական թթ. այն անցնում էր Կասպից ծովով, Կուր գետով, Վիրահայոց, Աշոցքի և Եղնասարի լեռներով մինչև Կուր գետի ակունք, այնուհետև ուղիղ գծով հասնելով Պարխարյան լեռներ, ապա Ք.ա. V դ. 80-ական թթ. վերջից մինչև IV դ. Կասպից ծովով, հետո Կուր գետով, այնուհետև՝ Կուրի և Իորիի միախառնման շրջանից ձգվել է մինչև Ալազան գետի միջին հոսանքի աջափնյակի հատված, այս տարածքից, ուղիղ գծով ներառելով Ռուսթավի և Գարդաբանի շրջանները, հասել մինչև Կուր գետ և այստեղից մինչև Մեսխական լեռնաշղթա:

Անդրադառնանք Աքեմենյան տերության հյուսիսարևմտյան սահմանի պաշտպանական համակարգի, մեր կարծիքով, կառուցվածքն արտացոլող հուշարձանների գործառնությամբ նշանակության խնդիրներին: Սարի-թեփե և Գումբաթի հնավայրերի հորինվածքային առանձնահատկությունների քննությունը փաստում է, որ վերջիններս զուտ ռազմական գործառնությո են

121 Мусхелишвили Д. Л., 1978, 98–102.

122 Давлианидзе И. О., 1977, 122–126.

123 Муравьев С. М., 1983, 117–147.

124 Florian Knauss, 2006, 79–118.

125 Исмизаде О. III., 1965, 125, 195.

ունեցել և նախատեսված են եղել հյուսիսարևմտյան սահմանապահ շրջանի պաշտպանական կայազորների տեղակայման համար, իսկ ինչ վերաբերում է Կարաշամիրլիի հուշարձանին, ապա, դատելով վերջինիս հորինվածքային առանձնահատկություններից, պրոպիլեոն /շքամուտք/, պարսպապատերով շրջափակված պարտեզ /պարադիզ/ և պալատ, ապա կարող ենք ենթադրել, որ այստեղ գործ ունենք ռազմավարչական բնույթ ունեցող մոնումենտալ կառույցի հետ: Նշենք, որ Կարաշամիրլիի այս հուշարձանը Իրանի սահմաններից դուրս հայտնաբերած ամենամեծ աքեմենյան տիպի շինությունն է: Իր չափերով, բացառությամբ հարեմի, չի գիջում Քսերքսեսի Պերսեպոլիս պալատին: Մեր կարծիքով, այս կառույցը եղել է հյուսիսարևմտյան պաշտպանական շրջանի սահմանապահ զորքերի կայազորի հրամանատարի նստավայրը: Նշենք, որ աքեմենյան տիրապետության շրջանում նմանատիպ նստավայր եղել է նաև Սիենայում՝ Եգիպտոսում, որտեղ տեղակայված էր Ելեփանտինյան կայազորի հրամանատարի՝ *rab haila* /գորապետ/ նստավայրը:¹²⁶

Հավանաբար, Աքեմենյան տերության հյուսիս-արևմտյան սահմանի այսրկովկասյան հատվածի վերահսկողությունը վերապահվել է XIII սատրապության սատրապին, որն այս պարտականությունները կատարել է, ըստ երևույթին, հատուկ գորահրամանատարի միջոցով: Ելնելով նաև պարադիզի առկայությունից, կարծում ենք, որ ներկայիս Կարաշամիրլիի տարածքում հայտնաբերված հնավայրը ժամանակին եղել է նաև XIII սատրապության սատրապի ձմեռոցը: Պատմական Ուտիքի տարածքում հայտնաբերված այս հնավայրերը նոր լույս կարող են սփռել հայոց թագավորների ձմեռոցների ծագումնաբանության, հստակ տեղորոշման, կառուցվածքի և գործառնությունների պարզաբանման հարցերում, իսկ այդ ձմեռոցների նախատիպերը պարզորոշ գալիս էին աքեմենյան շրջանից:

Պաշտպանական ինչ խնդիրներ էին իրականացնելու այս կայազորները: Մեր կարծիքով, Կարաշամիրլիի և Գումրաթիի ուժերի գործառնությամբ Դերբենդի լեռնանցքից եկող վտանգի չեզոքացումն էր, իսկ ինչ վերաբերում է Սարի-թեփեի կայազորին, ապա հաշվի առնելով կենտրոնական Վիրքում ժողովրդագրական վիճակը և ներկայիս Գարդաբանիի և Ռուսթավիի շրջաններում Աքեմենյան տիպի նմանատիպ հնավայրերի բացակայությունը՝ վերջինիս հիմնական գործառնությամբ Դարյալի լեռնանցքից եկող վտանգի չեզոքացումն էր:

126 Дандамаев М. А., Луконин В. Г., 1980, 236.

ЖОРЕС Д. ХАЧАТРЯН
Кандидат исторических наук
Институт археологии и этнографии
khachzhores@mail.ru

АРМЕН Ф. НАХИШКАРЯН
Кандидат исторических наук
Институт археологии и этнографии
armenarxeolog777@rambler.ru

О ЛОКАЛИЗАЦИИ ЗАКАВКАЗСКОЙ ЧАСТИ СЕВЕРО-ЗАПАДНОЙ ГРАНИЦЫ АХЕМЕНИДСКОЙ ИМПЕРИИ

/историко-археологическое исследование/

РЕЗЮМЕ

Выявление новых археологических данных ведет к переосмыслению установившихся в исторической науке взглядов на локализацию северо-западных границ Ахеменидской империи. Между тезисами относительно локализации XI, XIV, XV сатрапий Ахеменидской империи и существующими археологическими данными наблюдается ряд противоречий. На пространстве от южных склонов Кавказского хребта до восточного берега Каспийского моря и от левого берега Куры до территорий вдоль восточного берега реки Алазани, до сих пор не обнаружено ни одного археологического памятника ахеменидского типа. Не исключено, что продолжение систематического и последовательного археологического исследования региона может в дальнейшем более осветить эту проблему. Однако, напомним, что исследования, осуществляемые на протяжении целого столетия не привели к значимым результатам в этом направлении. Топографическое и функциональное изучение памятников на правобережье Куры и Алазани (Сари-Тепе, Карашамирли, Гумбати) показывает, что они имели оборонительные функции. Здесь проходила основная линия укреплений, окруженных крепостными стенами и были строения для размещения гарнизонов. Предполагается, что мы имеем дело с мощной оборонительной системой, которая могла иметь продолжение на левобережье

Куры. Конечной точкой этой системы на севере был Дарьяльский проход, а на востоке Дербент. Но существование оборонительных систем на правобережье Куры и Алазани и отсутствие подобных сооружений на левом берегу Куры и в Дербенте исключает вероятность этого положения. Сравнение приграничных укреплений VI сатрапии с оборонительными системами на правом берегу Куры и Алазани позволяет заключить, что упомянутые выше археологические памятники являлись частью оборонительной системы северной границы Ахеменидской империи, основными определителями которой были естественные рубежи – реки Кура и Алазани.

Внимательное изучение вышеуказанных источников показывает, что закавказская часть северо-западных рубежей Ахеменидской империи не доходила до Большого Кавказского хребта. Северо-западная граница Ахеменидской империи имеет два хронологических слоя. С конца VI в. и до 80-ых гг. V в. до н. э. она проходила по заливу, образовавшемуся вследствие трансгрессии Каспийского моря, по реке Куре, по территории Вирахайоц и Ашоцких гор, простираясь напрямую до Пархарских гор. А с конца 80-ых гг. V в. – до IV в. до н. э. граница проходила по Каспийскому морю, по реке Куре до точки слияния Куры и Иори, протянувшись до среднего течения реки Алазани, дальше по прямой, включая современные районы Рустави и Гардабани, достигала Куры, а отсюда шла до Месхетинских гор.

Какие оборонительные задачи исполняли вышеуказанные гарнизоны? Мы думаем, что функцией гарнизонов, размещавшихся в Карашамирли и Гумбати являлась охрана границы от набегов из Дербента, а что касается гарнизона в Сари-Тепе, то с учетом демографической ситуации в центральной Грузии и отсутствия памятников в нынешних районах Гардабани и Рустави, в их функции входило отражение возможных набегов врагов через Дарьяльский проход.

ZHORES D. KHACHATRYAN

PhD in History

Institute of Archaeology and Ethnography

NAS of Republic of Armenia

khachzhores@mail.ru

ARMEN F. NAKHSHQARYAN

PhD in History

Institute of Archaeology and Ethnography

NAS of Republic of Armenia

armenarxeolog777@rambler.ru

LOCALIZATION OF THE NORTH-WESTERN FRONTIER OF THE ACHAEMENID EMPIRE WITHIN TRANSCAUCASIA

/a study in history and archaeology/

SUMMARY

Critical interpretation of historical and archaeological sources as well as discoveries of new archaeological data may result in reformulating and redrawing the North-Western boundaries of the Akhaemenid Empire, thus prompting rethinking of certain established views in historical science.

There are discrepancies between the assumed localizations of the Achaemenid Satrapies №№ XI, XIV, XV and the existing archaeological data. The matter is that from the southern slopes of the Main Caucasian Ridge to the Eastern Caspian, from the left bank of the River Kura to the Eastern stretch of the River Alazani, no Achaemenide archaeological relic has ever been discovered. It is very likely that a systematic and programmed archaeological study can throw light on this issue. The fact nevertheless remains that the archaeological research carried out throughout the last century has yielded not a single result. Topographic and functional studies of Achaemenide-type relics in Transcaucasia shows that the latter (Sari-Tepe, Karashamirly, Gumbati) had defensive functions. Their basic planning (as shown by excavations) had the center nucleus with colonnades skirted with fortress walls and barracks. It seems that what we see is a massive defensive system

that could have extended to the left bank of the Kura terminating in the Daryal Pass on the North, and starting at Derbent in the east. However, the existence of defensive systems on the right bank of the Kura and Alazani and the lack of a similar structure on the left bank of Kura and in Derbent will rule out this situation. Comparison of borderline fortifications with the defensive systems on the right bank of the Kura and Alazani yields a conclusion that the abovementioned archaeological relics were part of the defense of the Northern border of the Achaemenid Empire, the major components of that defensive system being the rivers Kura and Alazanai as natural borders.

A careful scrutiny of the abovementioned sources shows that the Transcaucasian part of the North-Western borderline of the Achaemenid Empire ended short of the Kura Northern bank without reaching the Caucasian Ridge.

What defensive purposes were fulfilled by those abovementioned garrisons? We think that the function of the forces stationed in Karashamirli and Gumbati was neutralizing the hazard anticipated from Derbent, while with regard to the garrison of Sari-Tepe, and in view of the demographic situation in Central Georgia and lack of Achaemenid-type relics in what is now Gardabani and Rustavi, the major function of the latter was neutralizing the hazard anticipated from Daryal Pass.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Խորիկյան Հ. Գ., – Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ, Երևան, 2010:

Խորիկյան Հ. Գ., – Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության մատիենների տեղադրության շուրջ, – «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», 26, Երևան, 2007:

Խորիկյան Հ. Գ., – Հերոդոտյան սասպեյրների տեղորոշման հարցի շուրջ, Հանրապետական գիտական նստաշրջան, Նյութերի ժողովածու, Գյումրի, 2008:

Կարապետյան Ի. Ա., – Հայաստանի նյութական մշակույթը մ.թ.ա. 6–4-րդ դդ., Երևան, 2003:

Հակոբյան Ա. Ա., – Կասպերի և Կասպիանա /Կասպ/ մարզի տեղադրության մասին, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1983, թիվ 1:

Հարությունյան Բ. Հ., – Հայաստանի պատմության ատլաս, Երևան, 2004:

Հարությունյան Բ., – Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյցի», Մսա Ա, /Արևմտյան և Հարավային աշխարհներ/, Երևան, 2001:

Հերոդոտոս, – Պատմություն ինը գրքից, Թարգմանությունը Սիմոն Կրկյաշարյանի, Երևան, 1986:

Մանանդյան Հ., – Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պորբլեմների մասին, Երևան, 1944:

Յարութիւնեան Բ., – Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, «Հանդես Ամսօրեայ», Վիեննա, 1999, թիվ 1–12:

Ստրաբոն, – Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940:

Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, – Քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ. ներածություն ծանոթագրություններով և հավելվածներով, հատոր Ա, /Ե–ԺԲ դար/, կազմեց պրոֆ. դր. Լ.Մելիքսեթ-Բեկ, Երևան, 1934:

Քենոփոն, – Անաբասիս, Թարգմանությունը Սիմոն Կրկյաշարյանի, Երևան, 1970:

Алиев И. Г., – История Мидии, Баку, 1961.

Алиев И. Г., – Очерк истории Атропатены, Баку, 1989.

Акопян А. А., – Албания–Алуанк в греко–латинских и древнеармянских источниках, Ереван, 1987.

Арриан, – Поход Александра, перевод с древнегреческого Е. Сергеевко, М.–Л., 1962, III, 8,4.

Артаманов М. И., – Киммерийцы и скифы, Ленинград, 1974.

Археология СССР, – Древнейшие государства Кавказа и Средней Азии, Москва, 1985.

Асланов Г. О., – О археологических памятниках Апшерона, Материальная культура Азербайджана /МКА/, Вып. IX, Баку, 1980.

Виноградов В. Б., – О скифских походах через Кавказ, Труды Чечено–Ингушского НИИ, Т. X. Грозный, 1964.

Гагошидзе Ю. М., – Материалы раскопок Дедоплис миндори, Краткие сообщения о докладах и полевых исследованиях Института археологии АН СССР, /далее КСИА/, 151, Москва, 1977.

Гагошидзе Ю. М., – Могильники Триалети, Каталог III, Могильники античной эпохи, Тбилиси, 1982.


- Гагошидзе Ю. М.**, – Самадло 1, Тбилиси, 1982.
- Геродот**, – История в девяти книгах, перевод и предисловие Г. А. Стратановского, Ленинград, 1972, III.
- Давлианидзе Ц. О.**, – О некоторых неопубликованных материалах раннеантичной эпохи из юго-восточной Грузии, КСИА, N 151, Москва, 1977.
- Дандамаев М. А., Луконин В. Г.**, – Культура и экономика древнего Ирана, Москва, 1980.
- Дьяконов И. М.**, – История Мидии, М.–Л., 1956.
- Есаян С. А., Погребова М. Н.**, – Скифские памятники Закавказья, Москва, 1985.
- Исмиаде О. Ш.**, – Раскопки на холме Кара-тепе в Мильской степи /1954–1958/, Материалы и исследования по археологии СССР /МИА/, Москва, 1965.
- Крупнов Е. И.**, – О походах скифов через Кавказ, Вопросы скифо-сарматской археологии, Москва, 1954.
- Кудрявцев А. А.**, – Древний Дербент, Москва, 1982.
- Куфтин Б. А.**, – Археологические раскопки в Триалети, I, Опыт периодизации памятников. Тбилиси, 1941.
- Лордкипанидзе О.**, – Наследие древней Грузии, Тбилиси, 1989.
- Меликов Р.**, – Этническая картина Азербайджана в период ахеменидского владычества /VI–IV вв. до н. э./, Баку, 2003.
- Меликишвили Г. А.**, – К вопросу возникновения классового общества и государства в Грузии, Тбилиси, 1955.
- Муравьев С. Н.**, – Птолемева карта Кавказской Албании и уровень Каспия, Вестник древней истории, Москва, 1983, N 1.
- Мухелишвили Д. Л.**, – Археологический материал поселения Ховлегора, Тбилиси, 1978.
- Найденов В. И.**, – Гидрология суши: Новый взгляд, Вестник Российской Академии наук, 2001, том 71, 5.
- Нариманов И. Г.**, – Находки баз колонн V–IV вв. до н. э. в Азербайджане, Советская археология, Москва, 1960, N 4.
- Пиотровский Б. Б.**, – Ванское царство, Москва, 1959.
- Смирнов Я. И.**, – Восточное серебро, СПб, Санкт-Петербург, 1909.
- Тер-Мартirosов Ф. И.**, – Границы ахеменидских владений в Закавказье / V век до н.э./, Պատմա-քաղաքագիտական հանդես, 1998, թիվ 3:
- Тер-Мартirosов Ф. И.**, – Границы Армении и Закавказье /IV–II вв. до н. э./, ИФЖ, Ереван, 2006, N 1.
- Тер-Мартirosов Ф. И.**, – Памятник классической античности Армении, Вестник Ереванского университета, Ереван, 1993
- Тер-Мартirosов Ф. И.**, – Ширак в эпоху классической античности, ԳԱՀ, ՀՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, 1999, հ. 2:
- Тер-Мартirosов Ф. И.**, – Образование царства Армения в контексте исторических данных и исторической памяти, Ереван, 1995.
- Хачугайшвили Д. А.**, – Возникновение городов Иберии и их развитие в античную эпоху, Древний Восток, Города и торговля /III–I тыс. до н. э./, Ереван, 1973.
- Циктишвили Г. Г.**, – Результаты работ на Цихиа-гора, КСИА, 151, Москва, 1977.
- Шнирельман В. А.**, – Войны памяти, Мифы, идентичность и политика в Закавказье, Москва, 2003.
- Эминли Дж.**, – Расписная керамика эллинистического периода Азербайджана, Сборник докладов международной научной конференции, Археология, этнография, фольклористика Кавказа, Тбилиси, 2010.
- Florian S. Knauss**, – Ancient Persia and the Caucasus, Iranica Antiqua, 2006, vol. XLI.

Florian S. Knauss, – Der “Palast” von Gumbati und die Rolle der Achaimeniden im Transkaukasischen Iberien, Archeologische Mitteilungen aus Iran und Turan, Band 32, 2000.

Florian S. Knauss, – Nadine Ludwig, Gundula Mehnert, Ulrich Sens, Dirk Wicke, Ein Perserbau auf dem ideal Tepe bei Karachamirli, Achaemenid research on texts and archaeology, 2007.

Minns E. H., – The Scythians and Northern Nomades, Cambridge Ancient History, 1929, vol. III.

Spiegel Fr., – Eranische Alterthumskunde, Band II, Leipzig, 1873.





4. Պտղոմեոսի՝ Ասիայի III քարտեզը (II դար, հրատարակել է 1482 թ. Ուլմում)